

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶՆԱԳՐՈՒՄԸ
ԵՎ ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՊԻՈՆ ՀԱԿՈՐՅԱՆ

Ազգության խիղճն ու հոգին, նրա կյանքն ու կեցությունը, նրա նվիրական ծաղձանքներն ու անցած պատմական ճանապարհը բեկված են հոգևոր մշակույթի և, առաջին հերթին, գեղարվեստական գրականության մեջ: Պետականությունը կորցրած ժողովուրդների կյանքում գեղարվեստական խոսքը՝ համընդհանուրին հասկանալի բանաստեղծությունն ու լեզուն, ձեռք են բերում մեկ այլ ո՛չ նվազ կարևոր հատկանիշ՝ դառնում են հզոր ազդակ ու կենտրոնաձիգ ուժ և իրենց շուրջը համախմբում օտար բռնապետների լծի տակ և տառապանքների ու տանջանքի բովում տվալսող նրանց զավակներին, ուղղություն տալիս նրանց մտքերին ու պայքարին՝ հանուն գոյատևման և ազատ կյանքի, հանուն ազգային ոգու և դիմաստվերի պահպանության:

Այսպիսին է եղել գրականությունը տակավին հայոց հին դարերից սկզբնավորման առաջին դարերում՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Մովսես Խորենացու և Ծղիշեի ժամանակներում, Արշակունյաց հարստության կործանումից անմիջապես հետո, այսպիսին էր մեր բանաստեղծական խոսքը իր նոր շրջանի սկզբնավորման օրերին, Մխիթար Սեբաստացուց, Սիմեոն Երևանցուց սկսած մինչև Խաչատուր Աբովյան ու Ալիշան, մինչև ԲաճՖի ու Պատկանյան, Թումանյան ու Իսահակյան, երբ կարճատև դադարներից հետո կրկին ու վերստին օրակարգի հարց էր դառնում հայության լինել-չլինելու խնդիրը, ու երբ պետական և իշխանական հրամաններին ու կոչերին փոխարինելու էին գալիս բանաստեղծական վառվռուն խոսքը և իրենց ետևից սերունդներ տանող մարտական երգերը:

Մշակութային գործոնների դերը, այո՛, մեծ է եղել մեր ժողովրդի պատմական բախտի մեջ, և այս հայեցակետից պիտի դիտել հայ ռոմանտիկների հետագա բանաձևումներից մեկը, թե մեկ լավ գիրքն ի վիճակի է փրկելու մի ամբողջ ազգ: Այդպիսի գրքեր են եղել մեզ համար Խորենացու պատմագիրքը՝ հայության անցած ճանապարհի մասին, վաղնջական դարերից մինչև իր օրերը, Ծղիշեի ոգեշունչ դյուցազնագությունը՝ Վարդան Մամիկոնյանի և հայոց պատերազմի մասին, Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն, որ ամբողջությամբ նվիրված է Արևելյան Հայաստանի փրկության համար մղվող կռիվներին և ռուսական հզոր տերության հովանու տակ հայ ժողովրդի ազգահավաքմանը, հայոց պետականությունը վերականգնելու գաղափարի լուսաբանմանը, և էլի ուրիշ մատյաններ...

Հայոց նոր գրականության ձևավորման ընթացքը զուգահեռաբան ժողովրդի ազատագրական պայքարի ու փրկության ուղիների որոնման նոր շրջափուլին՝ հայության վերջնական կողմնորոշմանը դեպի Ռուսաստան: Այս նոր գաղափարներն ու բովանդակությունն աստիճանաբար գտան իրենց նոր ձևը,

նոր ոճը, որոնք նմանապես արգասավորվում էին ծանր ու դժվարին պայքարով:

«Հայոց թագավորությունը» վերականգնելու և ռուսական հզոր տերության հովանավորության տակ անցնելու համար սկսված շարժումը, որն սկզբնորում ծավալվում էր գաղափարախոսական ու դիվանագիտական ոլորտներում, ծնունդ տվեց աշխարհիկ ու հոգևոր բանաստեղծության մի քանի հատկանշական էջերի, որոնց առաջին նմուշների մեջ, սակայն, դեռ բացակայում էին իսկական առումով դրական-իդեալական հերոսները, բայց և որոնք հրաթափ բերանն ու թարգմանն էին ողջ հայության իղձերի:

Պայքարի ու որոնումների յուրաքանչյուր հաջորդ փուլ ազդակ էր դառնում նոր ստեղծագործությունների համար, որոնք աչքի էին ընկնում շեշտված նպատակաուղղվածությամբ, ծառայում էին մի գերագույն նպատակի. հայության բոլոր հատվածներին ու զանգվածներին ըմբռնելի դարձնել իրենց խաթարված քաղաքական, տնտեսական ու հոգևոր կյանքի ողբերգականությունը և դեպի «Հյուսիսային բևեռ» (որ խորհրդանշին էր Ռուսաստանի) հակվելու անհրաժեշտությունը, որպես փրկության միակ ելք, ինչպես նաև ջանք չխնայել ազգի այդ համընդհանուր բաղձանքը, շուտափույթ օգնություն ստանալու այդ ակնկալիքը հայցելու ռուսական գահին:

Իրենց ներքին բովանդակությամբ, գաղափարական նպատակաուղղվածությամբ ու պատկերների համակարգով այսպիսիք են ողջ XVIII և հաջորդ, XIX դարի առաջին տասնամյակներին ստեղծված գեղարվեստական այն բոլոր երկերը, որոնց առանցքը պարսկա-թուրքական բռնապետական լծից հայ ժողովրդի ազատագրության և հայկական պետականության վերածնման հարցերն են: Վերջիններով են ներծծված, դրանց մասին են հոգում, մտածում, երազում, նույն այդ խնդիրներն են շոշափում Սիմեոն Երևանցին իր նշանավոր «Շարական»-ով և ռուսական կայսերական տան հարատևությանը նվիրված «Մաղթանք»-ով, Երևանի հայոց առաջնորդներն իրենց հանգավոր նամակ-խնդրագրով, առաջին հայ-ռուս բառարանի ու քերականության հեղինակները՝ Կլեոպատրա Սարաֆյանը և Գրիգոր Խալաբյանը, իրենց ուսումնական մատյաններով, նաև՝ Մովսես Խորենացու հուշակավոր «Ողբ»-ի և Հակոբ Շահամիրյանի ու Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ»-ի ռուսերեն թարգմանության հրատարակիչները, մինչ շարադրում էին վերջինիս չափածո ընծայականը — բոլորն էլ շուրջ երկու դար առաջ կյանքի կոչված երկեր ու թարգմանություններ:

«Ամենագոր աստուած և թագաւոր յաւիտեանից... պահեա՛ զսա (իմա՛ ռուս թագավորին—Պ. Հ.) անսասան և անպարտելի... զորացո՛ւ ի թշնամեաց պատերազմի... րարձրացո՛ւ, տէր, և փայլեցո՛ւ զգաւազան իշխանութեան սորա ընդ ամենայն ծագս երկրի. ընդարձակեա՛ շառաւիղօք և հարազատ ժառանգակցօք մինչև ի կատարած աշխարհի, այլև օրհնեա՛ և պահպանեա՛ զամենեսեան, որք ընդ իշխանութեամբ սորին ենթադրի... զերկրպառազուս անուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան...»¹ Ռուսաստանի ռազմական հզորությունը փառաբանող շարականի այս խոսքերը XVIII դարի հայ նշանավոր

¹ «Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ» (Ժողովածու), բնագրերի պատրաստումը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Պ. Հ. Հակոբյանի, Երևան, 1978, էջ 4: Հետագա քոլոր մեջբերումները, եթե սկզբնաղբյուրներով չեն հավաստվում, այս գրքից են:

քաղաքական ու հոգևոր գործիչ, բանաստեղծ ու գիտնական Միմեոն Երևան-
ցիին պարտագրել էր ասել ու կրկնել, և սփյուռս աշխարհի հայոց բոլոր
տաճարներում, անգամ օտար բռնության տակ, երգվում էր այն, որ աներևա-
կայելի համարձակություն էր...

Այս ոգով ու տրամադրություններով էին ներծծված նաև բանահյուսա-
կան այն սակավաթիվ էջերը՝ պատմական երգերն ու ավանդությունները, որոնց
անանուն հորինողները յուրօրինակ ձևով հագուրդ էին տալիս հայ ժողովրդի
ազատագրական որոնումներին ու բաղձանքներին: «Խնչպես որ Ադամի որ-
դինները հույսով սպասում են Մեսիայի գալստյանը, որ փրկելու է նրանց հա-
վիտենական կորստից, այնպես էլ այս թշվառ ժողովուրդը մշտապես ապրել
ու այժմ էլ ապրում է Ձերդ թագավորական մեծության օգնության և աջակ-
ցության հույսով: Կանխագուշակել են մարգարեները, թե ժամանակներ անց
անօրենները չափից ավելի պիտի մոլեգնեն՝ հարկադրելով քրիստոնյաներին
ընդունելու իրենց նողկալի կրոնը, և այդ ժամանակ Մոսկովյան օգոստոսափառ
տանից պիտի դա ոմն մեծ իշխան, շատ ավելի քաջարի, քան Ալեքսանդր
Մեծը, որն իր ձեռքը պիտի առնի Հայոց թագավորությունը և ազատի քրիս-
տոնյաներին: Այս մարգարեությունը նույնիսկ մինչև այժմ հավատացել ու
հիմա էլ հավատում են»²:

Եվ այս «մարգարեական կանխագուշակությունը» խոր արմատներ էր
գցել հայության հոգու մեջ, նրանով խանդավառվում, տոկում ու սպասում
էին ժողովրդական բազմահազար զանգվածները:

Անցյալ դարի 20-ական թվականներին անգլիացի ավետարանական քա-
րոզիչ Ջոզեֆ Վոլֆին ահա՛ ինչ պատասխան է տրվել, մինչև նա Հայաստա-
նում կրթական հիմնարկներ բաց անելու գալթակղիչ առաջարկով ջանում էր
խախտել հայոց հավատն ու հավատարմությունը Ռուսաստանի նկատմամբ.
«Դեռ 200 տարի առաջ հայը հովանավորություն սպասում էր միայն Ռուսաց
պետությունից... մեր նախնիքներն ու հայրերը, շարժանալով այդ հովա-
նավորության՝ կտակեցին իրանց երեխաներին, թե երբ կգա այդ հովանավո-
րությունը, հայտնեն իրանց գերեզմաններին, և այն ժամանակ կհանգստանա
իրանց աճյունը... Ռուսաց կառավարությունն ինքը կանե մեզ՝ հայերիս հա-
մար այն ամենը, ինչ կարող է ամրապնդել հայ ժողովրդի բարեկեցությունը
և բարօրությունը»³:

XIX դարամուտը ավելի թեկավորեց հայ ժողովրդին, քանի որ հենց առա-
ջին տարիներից, մեկը մյուսի հետևից, սկսեցին ռուսական հովանու տակ
անցնել արևելահայ բնաշխարհները՝ Ղաղախ-Բորչալուն, Լոռին, Փամբա-
կը և Շիրակի դաշտը 1801-ին, Սյունիքն ու Արցախը՝ փոքր-ինչ ուշ:

Չնայած Հայաստանի սիրտը՝ Այրարատյան աշխարհը և էջմիածինը,
դեռ օտար տիրապետության տակ էին, և ռուսական զորքերի ձեռնարկած
զույգ արշավանքները (1804 և 1808 թթ., գեներալներ Պ. Դ. Յիցիանովի և
Ի. Վ. Գուդովիչի հրամանատարությամբ) հաջողություն չունեցան, բայց մո-
տալուտ փրկության հույսը չէր լքում ժողովրդին: Եվ այդ էլ վառ էին պահում

² Հայ ազատագրական լեգենդի այս տարբերակը քաղված է Իսրայել Օրու՝ Պետրոս Մե-
ծին մատուցած աղերսագրից (1701) և, անտարակույս, հյուսվել ու պատմվել է առաջին հեր-
թին Սյունյաց աշխարհում, եթե ոչ XCVII դարի սկզբներից, ապա այդ դարի երկրորդ կեսից
սլն ուշ:

³ Լեոն, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Տփղիս, 1914, էջ 96—97:

դարասկզբի հայ քերթողները: Մենք նկատի ունենք Գեորգ Խուրովին (Պոռոշյան) և Սերովբե Պատկանյանին, որոնք երկուսն էլ իրենց ստեղծագործական քայլերը թեպետև սկսել են պատմահայրենասիրական ողբերով, բայց հետո են սոսկական ողբասացներ լինելուց: Նրանք փրկության գուշակներ ու գալիք հաղթանակի շեփորահարներ են, բանաստեղծական վերարտադրության նյութ են դարձրել ռուսական զորքերի անդրկովկասյան առաջին արշավանքները և կանխատեսել վերջիններիս հետևանքները հայության պատմական բախտի համար: Ավելին, Սերովբե Պատկանյանը իր հավատն ու հույսը չի կորցրել անգամ XVIII դարավերջի մղձավանջային իրադրությունների մեջ, Տփղիսի 1795 թ. ավերման օրերին, և այդ առթիվ հյուսած ողբի մեջ հավելագրել է և այս տողերը, որ ակնարկում են ռուսների հաջորդ տարվա արշավանքները դեպի Անդրկովկաս.

Ռուսդաց տէրն արթնացաւ, և վեհափառն մեծացաւ,
Թագունհին մեզ տղորմեցաւ, տրտմեալ միրտ մեր ուրախացաւ...
Ցնցուղ արփուղն մեզ փագեցաւ, տրտմութիւն մեր փարատեցաւ,
Զի աստղ յանուն տուտ վիշապին ըստ կամաց մեր խաւարեցաւ:
Իւանդութիւն մեր ողջացաւ, վիրաւոր սիրտ մեր բուժեցաւ...

Այլի առաջ ունենալով 1800—1810-ական թվականներին Ս. Պատկանյանի հորինած «Սրահար եղեր, չար իշխան...», «Սարսեցուցին զօրաց երկնից...», «Պետութեամբ և ինքնակալ կայսերութեամբ...» ու այլ տաղերը, ինչպես նաև Գեորգ Խուրովի «Վասն սրախողխող առմանն Գանձակու», «Վասն հանդիսավեհութեան քաջայաղթ մեծ զօրապետ Ալէքսէյ Պետրովիչ Երմոլովին ներբողեալ» և այլ քերթվածները՝ դժվար չէ նկատել, որ նրանք պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան բնաշխարհները Ռուսաստանին միանալու բաղձալի պահը հավերժացրել ու արժեքավորել են բանաստեղծի զգայնաշափով՝ հաճախ չկարողանալով սանձել իրենց երևակայության թափը: «Ծագեցաւ առ մեզ լոյս ողորմութեան տեառն կրկնակի. Որոց ցանկացաք՝ արդ պարգևեցան մեզ Հայոցս ազգի... Ետ մեզ նոր հովիւ և տէր Արամեան սերի... ջնջեաց զգունդս պարսիցն հեծելեաց...» և այլն, — ոգում էր Գեորգ Խուրովը, ներբողելով ռուս զորավարներ Յիցիանովի և Երմոլովի սխրանքները:

Ս. Պատկանյանը, ընդհակառակը, ո՛չ միայն ժամանակի ամենատարածված հայրենասիրական երգերի հեղինակ է (նրա «Սրահար եղեր, չար իշխան...» տաղը Յիցիանովի կողմից Գանձակի գրավման մասին դրա ապացույցըն է), այլև նույն անցքերը վերարտադրելով հանդերձ՝ երևակայության ուժով խոսեցնում էր ռուսական թագավորին և այդ ձևով հավատացնում իր ընթերցողներին, թե նվազ իսկ չպիտի կասկածել, որ Ալեքսանդր Առաջին կայսեր զորքերը շատ շուտով կազատեն Այրարատյան աշխարհը, կհալածեն

4 Գեորգ Մելիքսեղեկյան Խուրովի (Պոռոշյան) ողբի ենթավերնագիրն է՝ «Ի վրդովանսն Հայաստանի ողբալով սգեալ», տե՛ս «Ընտիր պատմութիւն Դաիթ Բէգին և պատերազմաց Հայոց Խափանու», հրատ. Ա. Գուլամիրյանցի, Վաղարշապատ, 1871, էջ 87—88: Իսկ Սերովբե Պետրովյան Պատկանյանի հիշյալ Ողբը, որ մասն է նրա «Համառօտ պատմութիւն աւերեցման փայտակարան (իմա՝ Տփղիս—Պ. Հ.) մայրաքաղաքիս ի խանէն աղայ Մահմադի», տպագրվել է՝ «Դիվան հայոց պատմութեան», հրատ. Գ. Աղանյանցի, գիրք Ժ, Տփղիս, 1912, էջ 373—376:

պարսիկներին, երկրում կհաստատեն խաղաղություն և հայոց հոգևոր և աշխարհիկ գործերի ղեկը կհանձնեն արժանի ու հայրենասեր անձանց:

Որքան էլ պատմական եղելությունների արձագանքներ, այնուհանդերձ և՛ Գ. Խուրմի, և՛ Ս. Պատկանյանի տաղերի վերարտադրման նյութը սակավ չափով միայն բուն դեպքերն էին, և առավելապես՝ համընդհանուր տրամադրությունները, իսկ ներբողած հերոսները՝ գաղափարատիպեր, անձնավորումները մի կողմից Հայաստանի ու հայության, և մյուս կողմից՝ Ռուսաստանի ու ռուս ժողովրդի: Ճիշտ է, նրանց տաղերում, սովորաբար, որոշակի անձանց անուններ են հիշատակվում՝ Ալեքսանդր Առաջին, Յիցիանով, Երմոլով, Դանիել ու Դավիթ կաթողիկոսներ, Հովսեփ Արղության, Ջավաթ խան և այլն, բայց վերջիններս զուրկ են անհատականությունից և գաղափարատիպեր են, մի կողմից՝ քաջության ու առաքինության, մյուս կողմից՝ վատության ու ազգադավության, բռնի ուժի, բայց և երկշտության, կերպարի մեկնաբանման հայեցակետեր, որոնք պայմանավորված էին ժողովրդական-գուսանական արվեստի և Մխիթարյան բանաստեղծական դպրոցի ավանդների յուրացմամբ:

XIX դ. սկզբներից մեզ է հասել նաև պատմական երգի (տաղի) մի եզակի նմուշ, որն առանձնահատուկ տեղ է գրավում հայ քաղաքացիական քնարերգության տարեգրության մեջ և իր հորինվածքով ու ոճով շեղվում է ծանոթ կանոններից ու կաղապարներից: Խոսքը «Տաղ ի Ռուստոմ-Բեկ» պայմանական խորագրով ստեղծագործության մասին է, որն ավելի ծանոթ է բանահյուսական աղբյուրներից, գրի է առնվել ու հրատարակվել 1846-ից սկսած, նաև՝ տարածվել ձեռագիր տաղարանների միջոցով: Տաղի կերտվածքն ու լեզուն (գրաբար) զորավոր կռվաններ են հավաստելու համար, որ այն անհատ հեղինակի բանաստեղծական երևակայության արդյունք է, որի ամբողջությունը սակայն չի խաթարվել անգիր ճանապարհով ու սերունդների բերանով միմյանց փոխանցվելու ընթացքում:

Իրական մարդու սխրանքների և ողբերգական վախճանի, Արևելյան Հայաստանի ազատագրման համար մղվող կռիվներին անմիջական մասնակից, Ռուստոմ Աբովյանի դժբախտ ճակատագրի մասին է պատմում այս երգը, այն քաջարի հայորդու, որ անհավասար ու դաժան մարտերում մաքառում է մինչև ուժերի սպառվելը և ապա՝ արյունաքամ վիճակում գերվելով՝ տարվում է Թավրիզ և պարսից գնդանում ահավոր տանջանքներ կրելով՝ նահատակի պսակ ընդունում:

Տաղի ներգործուն ուժը հզորանում է մասնավորապես նրանով, որ հերոսն ինքն է պատմում իր օրհասի ու վախճանի մասին, իր վերջին ցանկություններն ուղղում սիրելի ազգին:

Մի իղձ ու բաղձանք ունի նա. գեթ իր մահով վառ պահել հայրենակիցների հոգում գալիք փրկության հույսը և անձնազոհության օրինակ դառնալ նրանց համար, ովքեր ազատագրական կռվի են ելել պարսից բռնապետության դեմ:

Մեր նյութին հայող ստեղծագործությունների ամենաստվար մասը հրապարակ է հանվել ավելի քան երկու տասնամյակ հետո, 1826—1829 թթ., ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ամենաթեթ օրերին և գրեթե նույն ժամանակներն էլ տպագրվել՝ «Երախայրիք Ներսիսյան դպրոցի» (Տփղիս, 1828), «Մուղայք Արարատյան» (Մոսկվա, 1829)՝ բանաստեղծա-

կան ժողովածուներում, «Ցուցակ վասն ամի տեառն 1829» օրացույց-տարեգրքում (Կալկաթա, 1829), առանձին գրքույկներով («Բան ի վերայ առման քաջակառոյց ամրոցին Երևանայ» Մ. Ղամազյանցի, Տփղիս, 1828), մուծվել ձեռագիր տաղարանների մեջ, կամ որպէս շրջաբերական տպագիր նամակներ՝ հղվել աշխարհի այլևայլ ծագերում սփռված հայկական գաղթավայրեր և այլն:

Լայն է այդ երկերի հորինման աշխարհագրական միջավայրը, որ ձգվում է Բարձր Հայքից մինչև Արցախի լեռներ, Հնդկաստանից մինչև կենտրոնական Ռուսիա: Իսկ ինչ վերաբերում է բուն գրվածքներին, ապա դրանք տարաբնույթ ու բաղմաժանր են, արձակ ու շափածո խոսքի ամենատարբեր տեսակներ՝ քնարական խորհրդածություն, գեղոններ ու տաղեր, տեսիլքներ, ապա և՛ պատմվածք ու ակնարկ, ճառ ու նամակ, հուշագրություն ու վարք: Հարուստ Ալամդարյան, Մեարդպ Թաղիադյան, Խաչատուր Աբովյան, Ստեփանոս Նազարյանց, Առաքել Արարատյան, Գալուստ Շերմազանյան, Մովսէս Վարդանյանց, Նիկողայոս Տեր-Շմավոնյան, Մելքիսեդեկ Ղումազյանց, Խաչատուր Ազվանցի, Աբրահամ վարդապետ, Մանվել Կյումուշխանացի, Եփրեմ Սեթ, Համբարձում Սարուխանբեկյանց — ահա՛ մի քանի անուն անցյալ դարի առաջին կեսի հայ գրողների, որոնք արձակ ու շափաբերական երկեր են նվիրել կործանումից փրկված հայրենիքին և հայության հոգևոր կենտրոնին, պատերազմի նշանավոր անցքերին ու անցուղարձերին, ժողովրդական վրիժառուներին և հայ ու ռուս քաջարի զորականներին, ռուս տեղությանը, թագավորին ու նրա զորավարներին, խորհրդածել ազգի երջանիկ ապագայի մասին, ներբողել նրա պատմության մեջ սկսված նոր դարագլուխը:

Իրենց գրչեղբայրներին ջանադրորեն ձայնակցում են թուրքագիր հայ աշուղները, ոգևորության անսպառ նյութ գտնում այդ բախտորոշ անցքերի մեջ, ժողովրդական հավաքույթներում հնչեցնում իրենց խաղերն ու երգախառն վեպերը, որոնք ասվում ու վերապատմվում էին դեռ շատ տասնամյակներ⁵:

Քաջ գիտակցելով, թե հայ ժողովուրդն ի՞նչ ահավոր հարցականի առջև էր կանգնած վերջին ռուս-պարսկական պատերազմի նախօրեին, և ինչ ծանր զոհերի գնով է ձեռք բերվել արևելահայության փրկութունը պարսից դժոխքից, այդ կռիվների հայ և ռուս հերոսներին արժանին հատուցելու ազնիվ մզումով՝ մեր բանաստեղծները պերճախոսությամբ ու հանդիսավեհությամբ կարծես մրցում են իրար հետ, հայության կյանքում բացված հույսի ու լույսի այն առավոտը հռչակելով իբրև նոր ոսկեդար, և երբեք առաջնություն, այսինքն՝ հայոց և հանուր մարդկության բազմադարյան պատմության ամենախոշոր իրադարձություններին համազոր անցքեր՝ աշխարհի արարչությանն ու մարդկության ծննդին ընդհանրապես, երկրի վերաբնակեցմանը ջրհեղեղից հետո, նոյն նահապետի ու որդիների ձեռքով, գրական-մշակութային ու քաղաքական այն հզոր վերելքին, որ ապրեց պետականությունը կորցրած Հայաստանը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով հայոց գրերի գյուտի ու դպրության սկզբնավորման շրջանում, հինգերորդ դարում:

⁵ Նկատի ունենք հայտնի աշուղ Միսկին Բուրջու թուրքերեն խաղը գեներալ Մազաթովի ու Շամխորի ճակատամարտի մասին (քննադրել ներկայումս պահվում է Ե. Զարեհցի անվան գրականության և արվեստի ֆանդարանում, հեղինակի ինքնագիր դավթարում), Միրզա Ցուսուֆ (Հովսեփ) Շահնազարյանի ներբողը Երևանի գրավման առթիվ և այլն:

Անկէ շրջանաց երկնից կամարաց ախօր դադարի,
նոր հոլով առեալ, նոր դար մեղ ցուցեալ՝ նոր ամ սկսանի...
Երփնազարդ ծաղկունք՝ զօրք Ռուսաց անքոնք, որ աստ
նեկայ կան,
Ըն վանիչք գերիչք գրոհին թշնամեաց իւայիւ փրկչական...

Այս հույսով ու հավատով էր գրիչ առնում ձեռքը երիտասարդ բանաստեղծ Մովսես Վարդանյանցը 1827 թ. հունվարի մեկին, երբ ուսաց գորքերի մեծ արշավանքը դեպի Այրարատյան աշխարհ՝ դեռ չէր սկսված, երբ Երևանի ազատագրմանը նախորդած արյունահեղ ճակատամարտերից (ինչպես Օշականի, 1827 թ. օգոստոսի 17) և ո՛չ մեկը դեռ տեղի չէր ունեցել։ Իսկ երբ Երևանն արդեն ծունկի էր եկել, հաղթանակն արդեն նվաճված էր, և մարդկանց հուսավառում էր բախտավոր ապագան, նույն բանաստեղծն իրար էր հակադրում երեկն ու այսօրը՝ երկու կյանք ու աշխարհ, երկու իրականություն ու իրավիճակ, մեկ անգամ էլ վերապրում տառապագին անցյալը և անզուսպ խնդությամբ ներքոցում Արարատյան տան ու Ասքանազյան ազգի փրկությունը։

Ողբալի անցյալ և հուսավառ գալիք, հուշ ու անորոշություն, հուլյսերի իրականացումը դեռ չտեսած, ազատության օրվա կարոտը հոգում գերեզման իշած ազգակիցների համար խորունկ վիշտ և անչափելի հրճվանք սփյուռուս աշխարհի հայության զավակների հայրենադարձության ու ազգահավաքման համար — այս հակադրությունների ոլորտում են ծավալվում Առաքել Արարատյանի քերթվածները՝ հյուսված Երևանի ազատագրումից անմիջապես հետո:

Ուշադրության է արժանի ապագա հանրային ու գրական գործիչ, բանասեր և ազգագրագետ Գալուստ Շերմազանյանի բանաստեղծական երախայրիքներից մեկը նաև, որի տասնվեցամյա հեղինակը փորձելով թարգմանը դառնալ ազգակիցների զգացմունքների, որոնում էր ներշնչման ու ներբողման նոր ձևեր, ինքնատիպ ու տարբեր մյուսներից, բայց և հավատարիմ Ազոնց Ստեփաննոսի Ճարտասանության հրահանգներին: Պատանի բանաստեղծը հայոց աշխարհի փրկության տոնին մասնակցելու հրավեր է ուղղում անտիկ քաղաքակրթության օրրաններից մեկին՝ հուսկավոր Աթենքին, որը նույն շրջանում թեպետև արյունաքամ էր եղել թուրքական յաթաղանի վերքերից, բայց շարունակում էր տոկալ ու մարտնչել:

Արի՛, Հայաստան, հա՛ն զըրդդ պատմուճան խաւար տրտմութեան,
Զանդու շարշարանս դարաւոր վշտաց ա՛րկ ի մոռացման,
Փառացս յաղթանակ քեզ լիցի՛՜ զարդիս դեղ մոռացութեան,
Ո՛ր երբէք լիշի քեզ վիշտ լեղուահամ,՝ գհարուած, գկործան:

Ճախրեսցի՛ր ընդ յօդս՝ թռիչս առեալ փրփռիկն Հայաստան,
Շատ տառապանօք յստակեալ ի բովս հրոյն նեղութեան,
Պճնեսցի՛ր ի շուք, ի զարդ գեղեցիկ իւրոյ հարսնութեան,
Զբազմաթիւ տրդիս տաճցէ ընդ թնուփք իսր աուրք մայրութեան:

Հակադրությունների ու պատմական զուգահեռների ոլորտից էր արտահայտվում իրենց քաղաքական հերքումը Երևանի քաղաքական կյանքի նկատմամբ։ Նրանք հայտարարեցին, որ Հայաստանի հանրապետության (Նիկողայոսյան), որը հայտնի էր որպես «Երևանի հանրապետություն», չէր կարող լինել անկախ պետություն։

րի ահավորությունն ըմբռնելի դարձնելու համար դրանք համեմատում էր Փաղարյան ցուլի հառաչանքների հետ, մի դիվական տանջանք, որ վեր է ամեն երևակայությունից:

Նման աներևակայելի տառապանքների միջով էր ձգվում հայ ժողովրդի հարյուրամյա ճանապարհը. հետևապես, հայությունն ինչպե՞ս կարող էր անկեղծորեն շխանդավառվել այս «նորահրաշ փառքով»՝ պարսից բիրտ ու դաժան լծի տապալումով, Հայաստանի ազատագրության մեջ ու ազգի փրկության մեջ, երախտագիտության մեջ չլցվել հանդեպ «հզորն Ռուսսիայ»:

Ցնծա՛, ուրախ լի, Հայաստան՝ աշխարհ, քաղցրի՛կ Հայրենի,
Զի ի քէն բարձան ամպք մրրկայոյզ ձախող վիճակի,
Ո՛չ ևս բովեսցիս ի ցուլ Փաղարեան անօրէն ազգի,
Անեղ բարձրելոյն աշոյն զօրութիւն է քեզ հովանի:

Ներբողման նախասիրված ձևերից էին ոգեկոչումները. ընդգծելու համար դեպքերի ու դեմքերի վեհությունն ու հերոսականությունը, մեր նոր բանաստեղծները հետոքական հարցումներ էին ուղղում կամ օգնության կանչում վաղնջական ժամանակների հայ և օտար աշխարհահռչակ քերթողներին, իսկ երբեմն էլ առ ոչինչ համարելով դարերի հեռավորությունը, իրադարձություններին հանդիսատես էին դարձնում հայոց պատմության տիպար հերոսներին ու արքաներին՝ իրադարձություններն արժեքավորում կամ նժարում նրանց աչքերով, հարցնում ու հայցում մուսաններին՝ պարգևել իրենց ուժ ու շնորհք, որպեսզի կարողանան անվրեպ պատմել երեկվա հերոսական անցքերը, որոնք միայն ու միայն զարմանքի, հիացմունքի և երախտագիտության զգացումներ էին առթում հանդեպ Ռուսաստան և ռուս-պարսկական պատերազմների ճակատամարտերում հռչակված հերոսները:

Գրեթե բոլոր բանաստեղծությունների համար պարտադիր ու սիմվոլիկ կերպարների՝ ռուսական կայսեր և ամենայն հայոց կաթողիկոսի կողքին, ամենից ավելի ներբողվում էր Ներսես Աշտարակեցու անձն ու վաստակը ազգի ու հայրենիքի փրկության ասպարեզներում:

«Իսկական արվեստն իրավունք ունի շափազանցելու», — մի առիթով նկատել է Մաքսիմ Գորկին⁶: Որքան էլ շափազանցված լինեի երիտասարդ հայ քերթողների խոսքը, այնուամենայնիվ բանաստեղծական այդ էջերը ճիշտ էին վերարտադրում իրականությունը, քանի որ Ներսեսը ո՛չ միայն հոգևոր գործիչ էր, այլև հայրենիքի փրկության մարտիկ ու զինվոր, որը երեկվա շինականների և այսօրվա աշխարհագորայինների հետ հավասար կիսում էր զինվորին բաժին ընկած բոլոր զրկանքներն ու վշտերը, մշտապես գտնվելով ռազմական գործողությունների հորձանուտում և մահվան երախում:

Մեծ են արգասիք Ներսիսի վեհիս ի մեր աշխարհի,
Ջինջ ճառագայթեն, լե՛ր ակտնատես անյաղթ դիցազգի,
Աներկմիտ ի նմա է քո իսկաքանչ գեղաղէշ հոգի,
Որով շատ անխոնջ, աշխոյժ աշխատի յօգուտ մեր ազգի:

⁶ М. Горький, Собрание сочинений в 30 томах, т. 27, М., 1953, стр. 225.

Այս տողերի հեղինակը ապագա հռչակավոր լուսավորիչ Ստեփանոս Նազարյանցն է, այն ժամանակ հազիվ տասնհինգամյա պատանի, բայց ուղղամիտ, ճշմարտախոս և համարձակ, քանի որ ներքողը գրված է մի շրջանում, երբ Ներսես Աշտարակեցին մեկուսացված էր և կամավոր աքսոր ուղարկված հեռավոր Բեսարաբիա:

Ինչ վերաբերում է պատմական անձանց ոգեկոշումներին, ապա դրանց հետաքրքրական դրսևորումներից մեկը Աբովյանի «Նոր Ինչ» են այս ցույցը մերս Հայաստանի...» սկսվածքով քերթվածն է, գրված 1827 թ. հոկտեմբերի սկզբներին, Երևանի ազատագրման լուրերի թարմ տպավորության տակ, և ինքնըստինքյան քաղաքական հեռատեսության շոշափելի օրինակ է:

Ռուսների մուտքը ապահովում է այն բոլոր նախապայմանները, որոնք Հայաստանն ու հայությունը հասցնելու էին հին փառքին—ահա՛ մեծ ու հաղթական կռիվներից երիտասարդ Աբովյանի քաղած գլխավոր եզրակացությունը:

1820—30-ական թվականներին հայ գրականության մեջ ներթողված վիպական ու իրական հերոսներից է նաև հայազգի գեներալ Վալերիան Մաղաթովը, որի անձն ու սխրանքները ծնունդ էին տվել լեգենդների և արդեն դարասկզբից մուտք գործել ռուսական ռազմական արվեստի տարեգրության մեջ, իբրև վերջինիս փառավոր էջեր: Քաջ, անվեհեր ու հնարամիտ այդ զորավարը հռչակված էր Արևելքում և լայն ժողովրդականություն էր վայելում:

Մաղաթովի մասին, նրա կենդանության օրոք և վաղաժամ մահվանից հետո (1829), ամենատարբեր լեզուներով գրվել ու հորինվել են գրքեր, վիպասքեր, երգեր, բանաստեղծություններ, որոնց հայկական զուգահեռները ոգով ու ոճով սերտ աղերսներ ունենալով Արևելյան Հայաստանի ազատագրման տարիների հայ բանաստեղծական էջերի հետ, ունեն և նկատելի յուրօրինակություններ:

Հայոց նոր գրականության քնարական ու էպիկական ժանրերն այդ տարիներին, ըստ ամենայնի, դեռ վերջնականապես ձևավորված չէին, և արտացոլվող իրականությունն ինքն էր թելադրում համապատասխան ձևը: Ներկա դեպքում մեր քերթողները հետևում էին հին վիպական երգերին ու պատմական շափածո զրույցներին, արևելյան տարածված դյուցազներգությունների ոճին ու հնարանքներին, պատմում հանդիսավոր ու հանդարտ, պահպանում պարտադիր սկիզբը, միջնարարն ու վերջը, պատճառաբանում հերոսի ցասումըն ու խոլական մոլուցքը, ծաղրում պարտված թշնամու խայտառակ փախուստը: Այդօրինակ ստեղծագործություններից հիշենք երկու նմուշ: Դրանցից մեկի հեղինակը շնորհալի տաղերգու, Տաթևի վանական դպրոցի երբեմնի աշակերտ հաշատուր երեց Աղվանեցին է («Տաղ արարեալ յամենանուաստ հաշատուր իրիցուէ, վասն ուխտազանցութեանն Պարսից և լգարտելոյն նոցա ի սակաւաթիւ զօրացն Ռուսաց»), մյուսինը՝ Արցախի հոգևոր առաջնորդ Բաղդասար Հասան-Ջալալյանի սան Համբարձում Սարուխանբեկյանցը («Վասն պատերազմին Պարսից ընդ քաջամարտ զօրացն Ռուսաց որ 1826 յամին»):

Երկու դեպքում էլ ասքերի նյութը ռուսների առաջին փայլուն հաղթանակներն են Շամքորի ու Գանձակի մոտ, ռուս զինվորի քաջագործությունները և անխախտ հավատը, թե քանի գեներալ Մաղաթովը իրենց հետ է, ռազմապատվածը երբեք երես չի՝ թեքի իրենցից:

Ճիշտ է, այդ պատերազմում փոխվել էին զենքերն ու սպառազինությունները, բայց մեր հեղինակներն իրենց իդեալ զորավարին զրահավորում էին Հայկ Նահապետի կամ Վարդան Մամիկոնյանի նման:

Աստուածազօր այս զօրապետ զօրս իւր պատրաստեաց,
Ջարս ընտիրս և սպառազէնս շուրջանակի իւր կարգեաց,
Գոտեւորեալ զմէջս իւր յարկի նիզակ՝ վառեցաւ,
Ապա առեալ զսակաւ զօրս՝ ել ընդ առաջ, Տէր կոչեաց:

Ի հասանել առ սիմեանս երկուց վողմանց գոռ մարտկաց՝
Ահագնաբար դղրդոսմն լինէր յերկրի ի քաջաց,
Ահ և երկիւղ պակուցանող ելանէին ի զօրաց,
Որ զվտանգ մեծ կորստեան զօրքն Ռոսաց տայր Պարսկաց...

Անդ ո՛չ սակաւք ի հսկայից կողմանց Պարսից մեռանին,
Որպէս գազան՝ սրով սատակեալ, անկեալ յերկիր տապալին,
Ջօրքն չարին զյաղթիլ իւրեանց ի քաջ Ռուսաց տեսանին
Եւ ի նոյն վաճրս, ռուսի ելին, անդրադարձեալ վերջաւորին:

Ապա դարձեալ յայս յանդողում սրտերազմէ Մատաթով,
Կոչեաց զզօրս քաջակորով՝ յետկոյս դառնալ յոյժ փութով,
Ջի դարձուցին զթշնամին, ուստի իջին ամթով,
Եւ յաղթեցին զչարանիւթն տեառն աստուծոյ սուրբ գթով:

Ջօրքն Ռուսաց՝ ուրախութեամբ աւար առեալ բերէին,
Եւ զօրապետք փառք և պատիւ սուրբ աստուծոյ երգէին,
Եկեալ հասին դուռն ամրոցիս, ուր առասել խնդային
Եւ դմատնին ի պարտովթիւն զօրացն Պարսից պատմէին:

Սարուխանբեկյանցը, որի «Տաղ»-ից են մեր քաղվածքները, ժամանակների հեռավորությունից է նայում դեպքերին և ավելի խանդավառվում բուն կռիվով, մինչդեռ խաչատուր երեցը չի կարողանում թաքցնել իր շահախնդրությունները: Նա զգում ու հասկանում է, որ այդ ճակատամարտերում պիտի կոփվի հայոց բախտը, ուստի Մադաթովին ու նրա զորքին մեծարում ու փառաբանում էր իբրև հայոց փրկարարների: Մի հատկանիշ ևս. խաչատուր երեցի ուսուցիչները ավելի գեղջուկ ասացողներն են. վերջիններիս պես մանրամասն է նա, բայց մակդիրների մեջ ժլատ, սքանչացած, բայց և իր հոգու խռովքը թաքցնել իմացող:

Անցյալ դարի 20—30-ական թվականներին հորինված և արևելահայություն բախտի մեծ հեղաբեկումները ներբողող չափածո ստեղծագործությունների մասին մեր խոսքն ավարտելուց առաջ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ գեթ երկու բարձրարժեք քերթվածի ևս՝ Հարություն Ալամդարյանի «Տեսիլ» (1827, հոկտեմբերի 1) և խաչատուր Աբովյանի «Խնդամիտ զգացմունք երախտագէտ հայկազին յազատութիւն Հայրենեաց իւրոց» (1828 մայիս—1830 փետրվար), Երկուսն էլ հասուն մտքի, գրական անհատական և բարձր վարպետության արդյունք են, ուշագրավ ու կատարյալ՝ ձևով ու բո-

վանդակութեամբ, բանաստեղծական հին տեսակների վերածնման և նրանց օգնութեամբ արդիական հարցեր արծարծելու առումով, Հայաստանի վերածնունդը և հայ ու ռուս ժողովուրդների հավիտենական բարեկամութեան գաղափարը ինքնատիպ ձևով ներբողելու համար:

Ալումդարյանի խոսքը ահագնացող տագնապներով առնչուէ. է, հրացայտ ու կրքոտ, մինչդեռ Աբովյանը պատմում է հանդարտ ու հանդիսավոր, մակդիրները, համեմատութիւններն ու պատկերները տեղին ու ճաշակով դործածելով, ժամանակի ու տարածութեան լայն ընդգրկումով: Երկու դեպքում էլ հայոց պատմական բախտի մեծ շրջադարձի մասին պատմողը հեղինակների քնարական հերոսն է, միայն թե մեկը՝ Ալումդարյանինը, աստվածների վճիռ է սոսկ ազդարարում, մյուսը՝ Աբովյանինը, պատկերում է վերածնված Հայաստանն իբրև շողափելի աշխարհ, որի նոր առօրյան աստիճանաբար վերածում է մի աներևակայելի ու շքեղ տեսիլքի:

Հայոց նոր արձակը ավանդների առումով համեստ ժառանգութիւն էր ստացել նախորդ դարերից, քան քնարագութիւնը: Հարկավ, որոշ վերապահումներով, այն նախապատրաստել էին պատմական երկերն ու վարքագրութիւնները, առակներն ու զրույցները, քարոզներն ու ճառերը, թղթերն ու ատենախոսութիւնները, բայց վերջինների մեջ, մասնավորապես XIX դարում, զգալիորեն նվազել էին գեղարվեստականութեան տարրերը: Ընդհանրապես, արձակ երկերի մեծ սով էր, ու չէին էլ նկատվում Եղիշեի ու Խորենացու, Գոշի ու Ալեկցու ավանդների վերածնութեան փորձեր:

Հայտնի երկերից առաջինը 1813 թ. Պետերբուրգում երկու փոքրագիր հատորներով լույս տեսած՝ Հարություն Արարատյանի գեղարվեստական ինքնակենսագրութիւնն է, իբր թարգմանութիւն հայերենից, որի բազմաթիվ էջեր նվիրված էին գեներալ Վալերիան Զուբովի անդրկովկասյան արշավանքներին, հայութեան ծանր վիճակին օտար լծի տակ, ներքողված ռուսական հովանավորութեան առավելութիւնները, բայց այդ գրքի բնագիրը տակավին չի գտնված, իսկ ռուսերեն տարբերակը բուն հայ արձակի ձևավորման մեջ որևէ մասնակցութիւն չի ունեցել:

Այնպես որ 1826—1829 թթ. ռազմի անցքերը, ապա և հրատապ լուծում պահանջող խնդիրներն (հայ աշխարհազորի ստեղծում, մայր հայրենիքում ազգահավաքման անհրաժեշտութիւն, Հայաստանի փրկութեան համար զոհված ռուս ռազմիկների հիշատակի հավերժացում և այլն) իրենք էին թելադրում արտահայտման անհրաժեշտ ձևերը, որոնք ապա դառնում էին մեծ մասամբ պաշտոնական գրութիւններ ու հրապարակային կոչեր, իսկ առանձին դեպքերում էլ՝ գեղարվեստական արձակի հատկանիշներով ճառեր, ուղերձներ, վարքեր, ինքնակենսագրական նոթեր, օրագրութիւններ, նամակներ և այլն: Ներսես Աշտարակեցու ճառերից ու հրապարակային նամակներից շատերը, Մեսրոպ Թաղիադյանի օրագրութեան հատվածը և երևանցիներին ուղղված նշանավոր թուղթը, Հարություն Ալումդարյանի հայտնի ճառը նոր կազմակերպված Հայոց զորքի առաջ 1827 թ. մայիսին մեր ասածի պերճախոս ապացույցներն են: Ծարտասանական հարցումները, պատմական զուգահեռներն ու հակադրութիւնները, ներշնչված, անկեղծ և քնարականութեամբ առնչուէ խոսքը դրանց՝ էական հատկանիշներն են: Եվ այդ վարակող ու անկեղծ խոսքը որոշակի նպատակի էր ծառայում: Այն հուսավառում էր լքված հոգիներին, բոլորի ուժերը լարում և ուղղում հայրենիքի փրկութեան սուրբ գոր-

ծին, վառ պահում հավատն ու սերը Ռուսաստանի նկատմամբ, կանխատեսում այն բոլոր դրական փոփոխությունները, որ կատարվելու էին հայության կյանքում, ռուս տերության հովանավորության տակ անցնելուց հետո:

Գեղարվեստականությունն արդեն շոշափելի որակ է դառնում բուն պատմական արձակի մեջ, որի երախայրիքներն են խաչատուր Աղվանեցու «Ռուսք ընդ պարսիկս ի շրջակայս Շուշույ» (1828) և Աբրահամ վարդապետի «Համառոտ պատմութիւն մարտին Բայազիտոյ» (1829) ստեղծագործությունները: (Մեր հետազոտության նյութին վերաբերող և այդ տարիներին գրված ուրիշ նման երկեր առայժմ ծանոթ չեն):⁷

Աղվանեցու երկի նյութը ռուս-պարսկական պատերազմի առաջին երկու ամիսների անցուդարձերն են Արցախում ու Գանձակում, մասնավորապես Շուշու բերդի հերոսական դիմադրությունը Աբբաս Միրզայի բանակին, ապա՝ Շամքորի և Գանձակի ճակատամարտերը: Հեղինակն առատորեն օգտագործում է Մովսես Խորենացու Հայոց պատմության ընտիր ոճերն ու բառամթերքը, վիպելու ձևերը, փորձ է անում ստեղծել գրական կերպարներ ի դեմս ռուս փոխգնդապետ Յոսեփ Անտոնիչի, հայազգի զորավար Հովհաննես Մադաթյանի (իմա՝ Վալերիան Մադաթով) և Շահգադայի (Աբբաս Միրզա)՝ յուրաքանչյուրին օժտելով իր անհատական խոսքով: Շահգադան, օրինակ, խորամանկ է. անկարող լինելով կոտրել ռուս կայազորի ու հայ կամավորների դիմադրությունը, նա փորձում է խարդավանքով ու խաբեությամբ նպատակին հասնել: Ահա՛ թե ինչ է ասում նա իր բանագնացների միջոցով պաշարված շուշեցիներին. «Մի՛ ընդ վայր աշխատիք՝ տքնելով զցայգ և զցերեկ, համբերելով քաղցոյն և նեղութեանն, զի ո՛չ էք կարողք զդէմ ունիլ այսչափ անթիւ զօրացս իմոց, զի ես ի վերայ բերդին ձերոյ այնքան նստելոց եմ, մինչև առից զդա որպէս և իցէ. և արդ՝ դուք որո՞վ յուսով՝ մինչև յե՛րբ քաղցեալ և ծարաւի բնակիք ի բերդիդ. ո՛չ տեսանէք և լսէք, թէ զորչափ գաւառս նուաճեալ եմ՝ ընդ ձեռօք իմովք. անցեալ ընդ Նուխի և ընդ Շրուան, անցանելոց եմ ևս ընդ Թիֆլիզ և յԱստրախան. եթէ զօրօքն Ռուսաց պարծիք, չիք ի նոցանէ ձեզ օգնութիւն, զի դարձեալ են յետս առ կայսրն իւրեանց. արդ՝ եկա՛յք հաւանեցարուք ինձ, և տո՛ւք զամրոցդ ձեր յօժարութեամբ կամաց ի ձեռս իմ, և ես ըստ հաճոյից ձերոց կառավարեցից զձեզ»: Ռուս հրամանատարը, ընդհակառակը, հավատարիմ է իր հայրենիքին, անվախ է ու անբերբ. «Խաբեբայութիւնն ո՛չ է գործ թագաւորի,—պատասխանում է նա Աբբաս Միրզայի դեսպանին,— եթե կարող ինչ ոք ես, մարտի՛ր ընդ մեզ և մարտիւ ա՛ռ զբերդս...»:

Ազգային արժանապատվության գիտակցության, հաստատակամության ու ռուսաց հանդեպ հավատարմության մեկ այլ գեղեցիկ օրինակ է հայոց առաջնորդների պատասխան խոսքը. «Ո՛չ ստախօսութեանդ հաւատամք, և ո՛չ զամրոցս մեր ի ձեռս քո տամք. այլ՝ մինչև ցվերջին կաթիլ արեանց մերոց ունիմք հաւատարմութեամբ և հպատակութեամբ ամէնողորմ և մեծի կայսերն ամենայն Ռուսաց քաջութեամբ մեռանիլ ի ներքոյ պարսպիս, քան հաւանիլ

⁷ Մի երկ էլ գրվել է ռուս-պարսկական պատերազմի ժողովրդական հերոս, բլուրականցի Հովհաննես Ասլանյանի մասին, հեղինակություն Նիկողայոս Տեր-Շմալոյանի և տպագրված Թիֆլիսի «Кавказ» լրագրում (1846, մարտի 16, № 11, խորագիրը՝ «Верность и самоотвержение»), միայն թե տակավին չի պարզված՝ այդ ակնարկի բնագիրը հայերեն է եղել, թե միանգամից շարադրվել է ռուսերեն:

ուրտ և վաղանցուկ բանիցդ քոց, և զանուն քաջութեան և հաւատարմութեան ղնախնեացն և զմերն ի միասին ընդ վայր կորուսանել ի սակաւ ժամանակըս», — ասում են նրանք:

Աղվանեցիին առաջիններից մեկը նոր դրականության մեջ, դեռ նրա խան-ձարուրային շրջանում, փորձ է արել ստեղծել ռազմի ծավալուն պատկերներ՝ իրենց հուժկու թափով ու սրերի շաշումով: Ուշագրություն են գրավում մասնավորապես Շամքորի և Գանձակի ճակատամարտերի նկարագրությունները:

Անկարող լինելով զսպել իր ոգևորությունն ու հիացմունքը, Աղվանեցիին խոսքը շարունակում է շափածոյով, ինչպես արևելյան ժողովրդական հերոսապատումների մեջ.

Որք խորհէին յՀայաստան ընդ ձեռով,
Զորս կոտորել և զորս տառնիլ լրկելով.
Վրէժխնդիր նոցա նախ՝ աստուած գոլով,
Ապա եղև Հայկազուն քաջն Մատաթով:

Աղվանեցիին, վերջապես, ստեղծել է իր իդեալ զորավարի գաղափարատիպը, որ կարծես մի նոր Վարդան Մամիկոնյան լինի Ավարայրի դաշտում: «Խաչակնքեալ զդէմս իւր նշանաւ ամենայաղթ Խաչին, առիւծաբար գոչէ, վարդանման յարձակի, իբրև զարծուի սլացեալ՝ արկանէ զինքն մէջ զօրացն Պարսից, և զօրքն իւր զկնի սուսերամերկ խումբ արարեալ խռնեցան, շրջապատեցան զՊարսիցն զօրօք, և կոտորեալ զնոսա ռմբով, հրացանիւ և աշտէիւ, ի ծուխ վառօղի շլացուցեալ, և զարեանց նոցա զհեղեղ, իբր գարնանազայր գետս, յորդեցին ընդ ծործորս դաշտին»:

Աբրահամ վարդապետի երկը, որ հիշեցինք վերևում, ընդհակառակը, համեստ է ծավալով, մի քանի օրվա անցուդարձերի նկարագրության՝ գեղարվեստական օրագրության կամ հիշատակարանի ձևով, հարուստ հերոսական և ողբերգական անցքերով, որոնք ապացույց են հեղինակի համակրանքին հանդեպ ռուսները, ռուս զինվորի անվեհերության, հայոց հավատարմության և համազգային ձգտմանը՝ ռուս մեծ տերության հովանուն արժանանալու համար:

Ռուս-պարսկական պատերազմի տարիների դեպքերն արտացոլող ստեղծագործություններից ամենանշանավորը, ինչպես և, առհասարակ, հայ նոր գրականության ու գեղարվեստական արձակի բարձրագույն արտահայտությունը գաղափարական-գեղագիտական առումով՝ Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպն է, ձևով ու բովանդակությամբ բոլորովին նոր և աննախադեպ մի ստեղծագործություն: «Վերք»-ը հավերժացնում էր Արևելյան Հայաստանի՝ ռուսական հզոր տերության հովանավորության տակ անցնելու դարաշրջանի պատմական տրամադրություններն ու իրադարձությունները, բացահայտում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման անհրաժեշտությունն ու պատճառները, ներբողում սերունդների այդ նվիրական բաղձանքն իրականություն դարձնելու համար մարտնչած իրական ու վիպական հերոսների սխրանքները:

«Վերք»-ի վերլուծությունը, անգամ վերահիշյալ առումներով, մեզ շատ հեռուն կտաներ, ուստի կբավարարվենք մի քանի խոսք ասելով այդ երկի հղացման և ստեղծագործման շարժառիթների մասին, որոնք սերտորեն

կապված են հայության ռուսական կողմնորոշման գաղափարի հետագա արժարժման և Արևելյան Հայաստանի ազատագրման համար մղված կռիվների վերարտադրման հայեցակետերի ու հեղինակային դիտավորությունների հետ:

Ռուսական կողմնորոշումը Աբովյանի համար մոդայիկ հրապուրանք չէր, ու ո՛չ էլ պարտադրանք կամ քողարկման ձև՝ գրաքննության ուշադրությունը շեղելու համար, այլ գիտակցություն ու համոզում՝ թելադրված հայ ժողովրդի պատմության ընթացքով և ընտանեկան ավանդներով: Նրա ակունքները մեծ խորքեր ունեին: Աբովյանի պաշտելի պապը մասնակիցն էր Երևանի հայոց այն գաղտնախորհուրդ ժողովի (1784-ի գարնանը), ուր որոշվում է՝ ռուս զորքի օգնությամբ պարսից տիրապետությունից Արևելյան Հայաստանն ազատելու նպատակով վերսկսել բանակցությունները Եկատերինա Բ կայսրուհու հետ, և այդ նպատակով հատուկ դեսպան է առաքվում Պետերբուրգ: Աբովյանի ծնողները սրբությամբ հետևում էին ընտանեկան այս ավանդներին, որոնք դեռ փոքրուց փոխանցվում են նաև մանուկ հաշատուրին: Տակավի՛ն պատանի՝ անձամբ տեսնելով ու զգալով օտար բռնության ողջ սարսափները, իսկ այնուհետև՝ Թիֆլիսում ուսանելու շրջանում իր վրա կրելով ռուս գրականության ու մշակույթի բարերար ազդեցությունը, Աբովյանը դառնում է այդ գաղափարի նվիրված գիտնական ու ջատագով: «Հոգոց և թառաչ հանելով՝ հայ էի ի տարածի՞գ երկնամբարձ շղթայս Կովկասեան և հոգի կենաց իմոց յուսայի միմիայն ի հիւսիսային հողմոյ ստանալ, այնգի հարան ինձ միմիայն բարբարոսութիւն և տգիտութիւն շնչէր», — գրել է նա այդ շրջանի իր հոգեկան տազնապների ու ձգտումների մասին⁸:

Ավելի ուշ՝ ուսանողական տարիներին, շփվելով արևմտաեվրոպական քաղաքակրթության հետ, ճաշակելով վերջինիս քաղցրություններն ու դառնությունները, նաև ծանոթ շրջաններում երբեմն լսելով մինչև անգամ նշավանքի խոսքեր Այրարատյան աշխարհում ցարական իշխանությունների գործած անարդարությունների մասին և ամեն ինչ լրջորեն ծանրութեթեմ անելով՝ Աբովյանն այնուամենայնիվ չփոխեց իր քաղաքական դավանանքը, նա դարձյալ երանի էր տալիս այն օրվան, երբ ռուսների տիրապետության տակ կանցնի ռոջ Հայաստանը, քանի որ «Միմիայն Ռուսաստանն է ի վիճակի ասիական ժողովուրդներին հասցնելու իրենց սրտանց տենչացած երջանկությանը»⁹ և փրկելու «ստրկական հնազանդությունից»¹⁰:

Կյանքի վերջին շրջանում՝ անմիջականորեն շփվելով ու տևական բախումներ ունենալով միապետության պաշտոնյաների հետ, նաև աչքի առաջ ունենալով փոքր ժողովուրդների լուսավորության ու բարգավաճման նկատմամբ պաշտոնեության հարուցած խոչընդոտները և լսելով առանձին անձանց տրտմունքները, Աբովյանը նորից ու նորից մնում է այն համոզմանը, թե դրանց բուն պատճառը ո՛չ թե ռուսական տիրապետությունն է, այլ օտար բռնության հասցրած հին ու դարավոր վերքերը, որոնցից ձերբազատվել կարելի է տևական հոգացումների ու խաղաղության պայմաններում, համընդհանուր զրագիտության ու լուսավորության տարածման, կյանքի ու աշխատանքի առաջավոր ձևերի արմատավորման, հայի ազգային ոգուն ու էությանը բնորոշ

⁸ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VI, Երևան, 1955, էջ 298:

⁹ Նույն տեղում, հ. VIII, Երևան, 1958, էջ 66:

¹⁰ Նույն տեղում, էջ 65:

հատկանիշների վերածնման ճանապարհով: Իսկ դրանք իրականություն կարող են դառնալ միայն ու միայն Ռուսաստանի մշտական հովանավորությունը վայելելու, ուստի մեծ ազգի հետ տնտեսապես ու հոգեպես մերձենալու, ազգորեն համախմբվելու և ինքնագիտակցության գալու դեպքում:

«Վերք»-ում ընթերցողների առջևով անցնում է երկու աշխարհ՝ հին ու նոր. պարսից տիրապետության ժամանակների հայ կյանքը և ռուսական տիրապետության պայմանների արևելահայ գյուղը՝ Քանաքեռն ու Պարնին: Մեկը թշվառության, ցնցոտիների և հոգևոր ու քաղաքական ստրկության, մյուսը՝ բարգավաճման մեջ:

«Փառք աստուծո, տուններս լիքը, գոմերս լիքը... Քրիստոնեի երկիրը՝ մերը... Ի՞նչ եք էդ շան հողումը կենում, ձեր օրն ու ութըը խավարացնում. ի՞նչ համ եք առնում... Աստված Ռուս թագավորի թախտը հաստատ սլահի, նրա դովլաթիցը՝ ինչ ասես ունինք. օձի ձու էլ որ ուղենամ՝ կճարեմ», — ասե՛ա՝ ռուսահայ գեղջուկի առտնին խոսք ու զրույցից մի նմուշ, և դրա կողքին՝ Այրարատյան աշխարհի հայության վիճակի հեղինակային մահասարսուռ բնութագիրը. «Դատաստան չկա՛, իրավունք չկա՛, ու հայ ազգն էլ էնքան էսպես ցավեր տեսել էր, մեկ օր խոսքըմին չէ՛ր ըլում, որ իր գլուխն ազատի: Աղջիկն ասես՝ քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում: Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղլուշաղը»:

Աբովյանի ողջ «Վերք Հայաստանի» վեպով մեկ սփռված օրհնանքի ու էրախտագիտության խոսքերը Ռուսաստանի վերաբերմամբ, նրա կանչերն ու կոչերը, նրա պատգամները՝ «Օրհնեցե՛ք Ռսի ոտը, ջան ջանի տվե՛ք, իրար սիրեցե՛ք...», «Օրհնվի էն սհաթը, որ Ռսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի չար, անիծած շունը մեր երկրիցը հալածեց...», «Հաստատ մնա Ռսի թագավորությունը, որ մեր ազգն ու աշխարքը գերությունից ազատեց...», «Ռուսաց լեզուն մեր տերությանն ա, պետք է ամենից առավել համարինք...» և այլն, բոլորն էլ անկեղծ են, աներեր հավատի ու համոզման առկուղմներ:

Աբովյանին հաջորդած ժամանակներում այլ էր կյանքը, այլ՝ նրա առաջադրած հարցերը...

XIX դ. 60—70-ական թվականներին հայության առջև ծառացած կենսական հարցերի լուծման ճանապարհին հանդիպելով լուրջ խոչընդոտների, ապա նաև չհամակերպվելով ցարիզմի վարած ազգային քաղաքականության հետ, մեր որոշ գրողներ ու գործիչներ սկսեցին քրքրել դրանց արմատները, մի անգամ էլ առողջ բանականությամբ վերլուծել 20-ական թվականների անցողարձերը և վերջնականապես պարզել՝ իսկապե՞ս ճշմարիտ էր ներսես Աշտարակեցու, Խաչատուր Աբովյանի և մյուսների փառաբանած փրկության ուղին:

Նազարյանցի, Նալբանդյանի, Արծրունու և ուրիշ շատերի համար հենց սկզբից դա վիճարկման ենթակա հարց չէր: Ահա՛ թե ի՞նչ էր գրում մասնավորապես Նազարյանցը իր «Հայերի կոչումը մարդկության մեջ» աշխատության մեջ. «...Հայերը ճշմարտապես և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նորանց մի անտանելի, անարգական ստրկությունից և բացել է նոցա առջև մի նոր քաղաքական կյանքի ասպարեզ... Թո՛ղ մեր հայերը ճանաչեն յուրյանց մեծ բարերարի շնորհը և գործ դնեն նորան արժա-

նապես՝ ամենայն պատրաստությամբ և հոգարությամբ ընդունելով Ռուսաստանի ձեռքից հվրոպական լուսավորության թանկագին պարգևը և ավանդելով յուրյանց ազգին այնպիսի կերպով, ինչպես կարող էր դա օրհնաբեր լինել հայերին»¹¹։

Նալրանդյանն ավելի հեռուն էր գնում, խորհելով միաժամանակ համայն մարդկության ազատության մասին և կապելով այն ռուսական հեղափոխության հաղթանակի հետ։ «Ռուսիո մեջ խմորված ազատությունը համարձակ կարելի է մարդկային ազատություն անվանել, քանզի ազատությունը հողի վրա կհիմնվի... Ռուսիո ազատությունը, ընդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ՝ մեծ խորհուրդ ունի...»¹²։

Կային, սակայն, գրողներ էլ, որոնք գնահատում էին ո՛չ թե ռուս-պաղեսկական և ռուս-թուրքական պատերազմների գլխավոր արդյունքը՝ հայության համախմբումը իր պատմական հայրենիքում, Այրարատյան դաշտում, և նրա հոգևոր ու տնտեսական վերածնության նախապայմանների ստեղծումը, այլ միմիայն հետևանքները, այն էլ սոսկ իրանահայ գաղթաշխարհի վերաբերմամբ։ Նրանք առանձնահատուկ ուշադրություն էին հրավիրում ռուսների գալստյանը սպասող գաղթաշխարհի հայության ասլրած խանդավառության վրա, երևակայության ուժով ստեղծում ժողովրդական վրիժառուների ինչ-որ խմբեր՝ գործած Սասնո լեռներում, Վասպուրականում ու Ատրպատականում, բայց ո՛չ բուն Այրարատյան աշխարհում, պատմում նրանց անկեղծ ձգտման մասին դեպի Ռուսաստան, հետո փոխադրում իրենց հերոսներին Արևելյան Հայաստան, որպեսզի բախման մեջ դնելով Անդրկովկասի իշխանությունների հետ և ենթարկելով հետապնդումների, արդարացնեն իրենց կանխակալ կարծիքը։

Գաղթականը միշտ էլ կարոտ ու տրտունջ ունի, որոնք հաճախ շարունակվում են տարիներով՝ ստիպելով մխիթարություն որոնել գուցե թե բնավ չապրած քաղցր հուշերի աշխարհում։ Արվեստագետն իրավունք չունի այս մոռանալու, երբ մատը դնում է հայի ցավոտ վերքին։ Սոսկական ունկնդիր ու պարզ կրկնող լինելը դեռ քիչ է, պետք է «յառաջիմաց»¹³ էլ լինել և կարողանալ ցույց տալու խավար հոգու համար ճառագող հույսի շողը, ինչքան էլ այն հեռուններից գար։ Այս առումով երկրնտրանքներ են ապրել և՛ Րաֆֆին, և՛ Պերճ Պռոշյանը։

Պռոշյանն, օրինակ, իր «Շահեն» վեպի մեջ վերաստեղծելով XIX դ. 20-ական թվականների վերջերին պարսկահայոց ապրած անկեղծ ոգևորության անմարելի պահերը և ապա՝ շատերին պաշարած հիասթափությունը, դրանց պատճառները փնտրում էր պաշտոնատար անձանց անճարակության և թույլ տված սկզբունքային մի սխալի մեջ. կամ պետք էր Ատրպատականից գաղթեցնել մինչև վերջին հայր և կամ՝ ո՛չ մի ընտանիք, քանի որ դրանից հետո անչափ թուլացավ այդ գաղթաշխարհի հայոց դիմադրությունը, և առավել սաստկացան նրանց հանդեպ պարսից բռնությունները։

¹¹ Ս. Ն ա զ ա ր յ ա ն ց, Հայերի կոչումը մարդկության մեջ, տպ. «Ստեփաննոս Նազարյանի երկերը», հ. I, Տփղիս, 1913, էջ 95—96։

¹² Մ. Ն ա լ ր ա ն դ յ ա ն, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ (Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 1940, էջ 61)։

¹³ Այս բառն օգտագործել է Կորյունը (տե՛ս «Վարք Մաշտոցի», Երևան, 1941, էջ 62, տող 3)։

Նման մտքեր կան նաև Բաֆֆու հումահու հրապարակված երկերում¹⁴։ Սակայն ի պատիվ Բաֆֆու պետք է ասել, որ նա «Հարեմ» վեպում վերանայել է այդ տեսակետը և վերարտադրել պարսկահայոց շրջանում ուսուպարսկական պատերազմի ճակատներում ուսանելի հաղթանակների առաջ բերած խանդավառությունը։

Պատմական ճշմարտությունն այն է, որ հայրենի բնօրրանին կյանք տալու միակ ուղին զանգվածային ներգաղթն էր Ատրպատականի հայաբնակ շրջաններից, որի իրականացման ճանապարհին ինչքան էլ ողբերգական պահեր ու զրկանքներ ապրեր ժողովուրդը, այնուամենայնիվ, նա փրկվում էր ընդմիջում։ Էլ չենք ասում, որ Արևելյան Հայաստանի բնակեցման հարցը հուզում էր նաև ցարական կառավարությանը, և ոմանք բոլորովին այլ դիտավորություններ ունեին։ Ողջ Այրարատյան աշխարհում ընդամենը 18576 հայ էր մնացել։

Ներսես Աշտարակեցին ու նրա համախոհները իրենց հեռատես քաղաքականությամբ կանխում էին հենց այդ։

Ռուս-պարսկական պատերազմի շրջանի անցուդարձերն իրենց արձագանքն են գտել նաև XIX դ. 70-ական թվականների արևմտահայ արձակի մեջ։ Մենք նկատի ունենք Մատթեոս Մամուրյանի «Սև լեռին մարդը» անավարտ պատմավեպը և Սեդրակ Տեր-Սարգսենցի «Շահենն ի Սիպիր կամ Գաղթական հայը» վեպը (Կ. Պոլիս, 1877), որ վիպասանական արվեստի առումով ամբողջությամբ գրված էր... «Վերքի» ազդեցությամբ¹⁵։

Նորից շոշափվում էր արևմտահայ գաղթականության չիրականացած ակնկալիքների հարցը, զարգացվում էր մի սխալ տեսակետ, ըստ որի, իբրև թե ուսական կողմնորոշմամբ հայ գործիչները հանիրավի հետապնդվել և տաժանակրության են քշվել դեպի Սիրիա՝ հյուսելով մի ամբողջ լեզենդ ու դրանով իսկ փորձելով անուղղակի ձեռք մինչև իսկ լուծել Աբովյանի անհայտ կորստյան առեղծվածը։

Այս ամենը պատմական ճշմարտությանը հասու չլինելու, ումանտիզմի և միտումնավորության արդյունք էին։

Հայության ուսական կողմնորոշումը պատրանք չէր և ո՛չ էլ հրապարակ էր հանվել ինչ-որ անձանց փառամտական կրքերին հագուրդ տալու համար, այլ համազգային, դարավոր ձգտում ու անկոծկելի ճշմարտություն, որ անկարող էր խախտել պաշտոնեությունն ո՛չ մի խարդավանք, ո՛չ մի ուշացած մարգարե։

Հետագա տասնամյակներին, ընդհուպ մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Այրարատյան աշխարհը Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանի անցուդարձերը գեղարվեստական արժարժման նյութ են դարձել մեկ անգամ ևս։ Դրա համեստ արդյունքը Բագրատ Այվազյանի «Հյուսիսի արծիվը» վեպն է (1901), ձևված Անդրկովկասում ուսական տիրապետություն հաստատվելու 100-ամյակին։ Այվազյանը ևս քայլում է Աբովյանի «Վերք»-ի գաղափարների ու կերպարների հետքերով և իբր աշակերտ՝ չի շեղվում իր գրական ուսուցչի հայտնագործած ուղիներից։

Դրան հակառակ, հայ մամուլն ավելի աշխույժ է եղել պատմության դասերը վերլուծելիս. ամենատարբեր առիթներով ու քաղաքական հայեցակե-

¹⁴ Բ ա ֆ ֆ ի, Սալբի, հ. I, Վիեննա, 1911, էջ 22։

¹⁵ Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն, Խաչատուր Աբովյանը և արևմտահայ գրականությունը, տպագրված՝ «Գրական-բանասիրական հետազոտություններ», գ. III, էջ 155 և 158։

տերով գրվել են պաամադրական ու հրապարակախոսական հոդվածներ, կիղակետ ունենալով Արուսյանի անձն ու գործը: Ամենահետևողականն այս առումով ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանն է. որը ողբապարսկական պաաներգմի տարիների անցքերին ու Արուսյանի ողբական կողմնորոշման խնդրին նվիրել է բազմաթիվ հոդվածներ: Թումանյանը ճշմարիտ է համարել հայության քաղաքական առաջնորդների ու հողեր կյանքի դաստիարակներին՝ Աշաարակեցու և Արուսյանի մատնանշած ուղին, քանի որ այն ապահովել է հայության գոյության խնդրին Արևելյան Հայաստանում: Պատմության դասերը Թումանյանին թելադրում էին վերստին արժարժել ողբական կողմնորոշման և հայ ու ողբ ժողովուրդների բարեկամության ամրապնդման հարցերը, որպես երաշխիք ազգի ֆիզիկական գոյության ապահովման և քաղաքական ակնկալիքների իրականացման: «Մենք կյանքի փորձով գիտենք ու հավատում ենք էդ մեծ ուժին ու կենդանի ղեկավարին և հավատում ենք, որ նա վերջ կդնի հայ ժողովուրդի էս անվերջ կոտորածին, վայրենի ժողովուրդների անվերջ բարրարոտությանը, քաղաքակիրթ աշխարհի էս անվերջ խայտառակությանը», — գրել է Հովհ. Թումանյանը:

Սովետահայ գրողները, ժառանգելով ու շարունակելով հայ նոր դրականության ավանդները, նոր ձևով մշակեցին այս կենսական թեման, նոր հրեղություն հաղորդեցին նրան:

ОСВОБОЖДЕНИЕ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ И НОВАЯ АРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРА

ПИОН АКОПЯН

Резюме

Освободительная борьба армянского народа против турецких и иранских завоевателей и стремление к переходу под покровительство России были одной из главных тем новой армянской литературы. Героические события и подвиги сынов армянского и русского народов в годы русско-персидской (1826—1827 гг.) и русско-турецкой (1828—1829 гг.) войн вдохновляли армянских писателей (А. Аламдарян, Х. Абовян, М. Тагиадян, С. Назарянц, Х. Арцахеди, Абраам вардапет и др.), которые в своих сочинениях воспевали великий перелом в исторических судьбах армянского народа, воодушевляя своих соотечественников к верности, вечной дружбе и духовному сближению с русским народом.

Во второй половине XIX в. и в начале XX в., когда на повестке дня стоял вопрос об освобождении Западной Армении, русская ориентация армянского народа и ее историческое значение вновь становятся ведущей темой армянской литературы и публицистики.